

ՏԱՃԿԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ.

Երկու քարէ մէկ ջաղաց ,
Սերն իցէ երկու դիաց :

Ընկերոջ ընկեր է պէտք ,
Հոգոյ հոգեկից է պէտք .
Ի՞նչ ընեմ տազր ու եղբայր ,
Սըրտի սըրտակից է պէտք :

Տէյիրմէն իբի դաշտան ,
Մուհապէր իբի պաշտան :

Եարըն եարանը կերէք ,
Ճանըն ճանանը կերէք .
Նէյլէյիմ գայըն գարտաշ ,
Եիւրէք եանանը կերէք :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ .

Մէկ մարդ մը գիտեմ որ աշխարհք եկաւ
Տասնըեօթներորդ գարուն հետ մէկտեղ .
Խորագէտ , ճարտար , անխոնջ երեւցաւ
Լեզուովն ու զէնքով միշտ ու ամէն տեղ .
Կեղծաւոր սիրով մեծ ազատութեան
Անմեղ թագաւոր մը սպաննել տրւաւ ,
Ինքզինքը կոչեց իւր ազգին պաշտպան ,
Եւ ինք՝ անողորմ բռնաւոր եղաւ :

ԱՊՐԻԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ .

Եգիպտոսի բուրգերը (Ֆարաօն րեպիէրի) սովորաբար կկարծուի թէ հին թագաւորաց գերեզմաններ էին , բայց ոմանք կհամարին թէ Արաբիոյ աւազներուն գէմ շինուած թումբեր են , ուրիշներն ալ կըսեն թէ գիտարաններ են . մինչեւ ցայժմ Եգիպտոսի այլ եւ այլ կողմերը կգտնուին : Գլխաւոր բուրգերն են՝ Քէսպսինը՝ որոյ բարձրութիւնն է 150 մեթր , Քեփրենինը՝ 135 մեթր , եւ Միկերինոսինը՝ 54 մեթր :

Տարւոյս Օրացուցին մէջ դրուած Յուլիսի Հանելուկն է ԿԻՐ (ՔԻՐԷՃ) :

Վերապիտոյ ամսագրոյս , ԳԱԹԸ . Վ . ԱՅՎԱԶԵԱՆ :

ՀՐԱՄԱՆԱԻ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ . ԻՔեոդոսիա , ի28 Յունիսի 1864 .

ԻՏպարանի Խալիպեան Ուսումնարանի ազգիս Հայոց .